3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹³ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

¹³ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹⁴

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:¹⁵

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊՍՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

¹⁴ Գ ա ն ձ ա պ ե տ ա ր ա ն ո ւ մ հ ա շ ի վ ն ե ր չ ո ւ ն ե ց ո ղ պ ա տ վ ի ր ա տ ո ւ ն ե ր ի դ ե պ թ ո ւ մ ս ո ւ յ ն կ ե տ ի վ ե ր ջ ի ն պ ա ր ք ե ր ո ւ թ յ ո ւ ն ը ի մ ք ա գ ր վ ո ւ մ է հ ե տ ն յ ա լ ք ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ա մ ք . «Ը ն դ ռ ռ ո ւ մ գ ն մ ա ն դ ի մ ա ց վ ճ ար ո ւ մ ն ի ր ա կ ա ն ա ց վ ո ւ մ է ս ո ւ յ ն պ ա յ մ ա ն ա գ ր ի վ ճ ար մ ա ն ժ ա մ ա ն ա կ ա ց ո ւ յ ց ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ ժ ա մ կ ե տ ո ւ մ , հ ի ն գ ա շ ի ա տ ա ն ք ա յ ի ն օ ր վ ա ը ն թ ա ց ք ո ւ մ »

¹⁵ Ս ո ւ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո ւ մ է պ ա յ մ ա ն ա գ ր ի ն ա խ ա գ ծ ի ց , ե թ ե գ ն վ ե լ ի ք ա պ ր ա ն ք ը չ ի հ ա ն դ ի ս ա ն ո ւ մ հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ց : Ի ս կ ե թ ե գ ն վ ե լ ի ք ա պ ր ա ն ք ը հ ա ն դ ի ս ա ն ո ւ մ է հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ց , ա պ ա ե ր ա շ ի ք ա յ ի ն ժ ա մ կ ե տ ը չ պ ե տ ք է պ ա կ ա ս լ ի ն ի 365 օ ր ա ց ո ւ ց ա յ ի ն օ ր ի ց :

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:¹⁶ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

¹⁶ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնու մտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համար այն ազդեցության գնի նկատմամբ, որի շրջանակում մարձանագրվել է ստանձնված պարտավորությունը: Եթե պայմանագիրը կնքվել է ստանձնված պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերը բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹⁷

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:¹⁸

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

¹⁷ Ս ու լ յ ն կ ե տ ը ի հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ի ը չ ի ի Ր ա կ ա ն ա ց վ ու մ գ ո Ր ծ ա կ ա լ ու թ Յ ա ն պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ու մ ի ջ ջ ո ճ ո Վ :

¹⁸ Ս ու լ յ ն կ ե տ ը ի հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ի ը չ ի ի Ր ա կ ա ն ա ց վ ու մ հ ա մ ա տ ե ղ գ ո Ր ծ ու ն ե ու թ Յ ա ն (կ ո ն ս ո Ր ց ի ու մ ի)պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ու մ ի ջ ջ ո ճ ո Վ :

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ


ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*



Ապրանքի							
չ/հ	(CPV)	անվանում	տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	Միավոր գին	Ընդհանուր գին ՀՀ դրամ
1.	31531500/7	Լուսամբույժի լեդ 59,5սմ * 59,5սմ	<p>Լուսամբույժի LED 59,5x59,5 սմ, հաստությունը ոչ ավել 3 սմ, 50 հերց, 60 վատ, 220-240 վոլտ, եզրերը պլոմինե պրոֆիլով եզրափակված սպիտակ լուսավորող մակերեսը ոչ թափանցիկ, իր մետաղական չորս ճոպաններով: Լուսատվությունը սպիտակ, 6500 կելվին, իր հոսանքի կարգավորիչի հետ միասին(դրոսել): 730 օր երաշխիքով: Գործարանային փաթեթավորմամբ:</p> <div style="text-align: center;">  </div>	հատ	750		
2.	31331270/1	Էլ. լար 2*1,5 մմ	<p>Էլեկտրական լար՝ 2 x 1,5մմ, ստանդարտին համապատասխան, պղնձյա, բազմաջիղ, երկշերտ փաթույթով, պոլիվինիլքլորիդային մեկուսացման, 100 մ փաթույթով:</p>	գծմ	1000		


3.	31331270/2	Էլ. լար 2*2,5 մմ	Էլեկտրական լար՝ 2 x 2,5մմ, ստանդարտին համապատասխան, պղնձյա, բազմաջիղ, երկշերտ փաթույթով, պոլիվինիլքլորիդային մեկուսացման, 100 մ փաթույթով:	գծմ	800		
4.	31684400	Էլ. վարդակ ներքին	Էլ. վարդակ ներքին իր ամբողջական իրանով մեկ տեղանի սպիտակ գույնի 220-250 վոլտ, ոչ պակաս 16 ամպեր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	250		
5.	30192231	Ներկարարի սկոչ թույլ կաչողականությամբ	Սկոչ թղթե ներկարարի թույլ կաչողականությամբ 5սմ լայնության ոչ պակաս 90 մ. երկարության	հատ	100		
6.	30192231	Ներկարարի սկոչ ուժեղ կաչողականությամբ	Սկոչ թղթե ներկարարի ուժեղ կաչողականությամբ 5սմ լայնության ոչ պակաս 90 մ. երկարության	հատ	20		
7.	44621100/2	Ջեռուցման այլումինե մարտկոց	Մարտկոց այլումինե առանցքների հեռավորությունը 500 մմ, խորությունը 95 մմ, չորս խցիկով, լայնությունը ոչ պակաս 70 մմ, գործարանային փաթեթավորմամբ և միատեսակ, գույնը սպիտակ: Բեռնաթափումը մատակարարի կողմից:	հատ	2100		
8.	44531220	Ջեռուցման այլումինե մարտկոցի սիլիկոնե տափօղակ	Ջեռուցման այլումինե մարտկոցի սիլիկոնե տափօղակ	հատ	300		
9.	42131110/1	Փական այլումինե մարտկոցի ամերիկանկա /ուղիղ/ 1/2 դյույմ	Փական այլումինե մարտկոցի ամերիկանկա /ուղիղ/ 1/2 դյույմ	հատ	250		
10.	44411300/1	Կերամիկական լվացարան	Լվացարան՝ կերամիկական, իր ոտքով, ոտքի բարձրությունը 60-65 սմ, լվացարանի լայնությունը 50-55 սմ, երկարությունը 45-50 սմ, սպիտակ գույնի, իր ամրացման պարագաններով և թաթիկ ծորակով: Բեռնաթափումը մատակարարի կողմից:	հատ	3		
11.	18141100/3	Ջեռնոց բանվորական	Ջեռնոց բանվորական առաջամասը՝ ռետինե մատներով	գույգ	300		

12.	42671180/8	Պերֆերատորի գայլիկոն /սվերլո/ պոբեդիտ 6մմ	Պերֆերատորի գայլիկոն /սվերլո/ պոբեդիտ 6մմ* 160մմ	հատ	20		
13.	42671180/11	Նասադկա PH-2 10սմ երկ.	Էլեկտրական կամ ձեռքի պտուտակահանի համար նասադկա PH-2 10սմ երկ.	հատ	40		
14.	42671180/12	Նասադկա PH-2 5-6սմ երկ.	Էլեկտրական կամ ձեռքի պտուտակահանի համար նասադկա PH-2 5-6սմ երկ.	հատ	10		
15.	42671180/13	Նասադկա PZ-2,10սմ երկ.	Էլեկտրական կամ ձեռքի պտուտակահանի համար նասադկա PZ-2,10սմ երկ.	հատ	10		
16.	42671180/14	Նասադկա PH-1 10սմ երկ.	Էլեկտրական կամ ձեռքի պտուտակահանի համար նասադկա PH-1 10սմ երկ.	հատ	10		
17.	42671180/15	Նասադկա PZ-1 10սմ երկ.	Էլեկտրական կամ ձեռքի պտուտակահանի համար նասադկա PZ-1 10սմ երկ.	հատ	10		
18.	44531160/11	Պտուտակ 4.2 մմ *13 մմ	Պտուտակ գիպաստվարաթղթի մետաղական պրոֆիլների համար սուր ծայրով: 4.2 մմ *13 մմ /սեմչկա/ 500-1000 հատանոց տուփերով	հատ	15000		

19.	31521560	30 Վատ լեդ լուսատու նախատեսված դրսի համար	<p>Հզորություն - Փաստացի 30 Վատ էներգիայի սպառում, ոչ միայն պիտակի տվյալ, այլ չափված իրական հզորություն (փորձաքննության ակտ),</p> <p>Լուսային հոսք: Առնվազն 4800 լյումեն,</p> <p>Լույսի ջերմաստիճան - 4000K դրսի տարածքների համար:</p> <p>Լուսատուն պետք է ունենա IP 65-67 կամ ավելի բարձր ջրակայունության և փոշիի դիմադրության աստիճան օգտագործման ընթացքում ցանկացած եղանակային պայմանների նկատմամբ դիմադրելու համար:</p> <p>Հարմարվող մուտքային լարման սանդղակ՝ 85-265 Վ:</p> <p>Աշխատում է 50-60 Hz հաճախականությամբ,</p> <p>Առնվազն 30,000 ժամ անխափան աշխատանքի հնարավորություն՝ որակյալ LED չիպերի օգտագործմամբ,</p> <p>Արտաքին չափերը՝ 15x15x3 սմ (± 3%),</p> <p>Մետաղական կորպուս՝ դիմացկուն արտաքին պայմանների նկատմամբ,</p> <p>Դիմապակին՝ խոշորացույցով պլաստիկ, ապահովելով լույսի միատեսակ բաշխում,</p> <p>LED-երի քանակը՝ 36 հատ,</p> <p>Խոշորացույցի քանակը՝ 36 հատ, յուրաքանչյուր LED-ի համար,</p> <p>360° պտտվող մեխանիզմ, որ թույլ է տալիս հեշտությամբ կարգավորել լուսատույի ուղղությունը, ըստ լուսավորման պահանջների և ամրացման համար համապատասխան երկու հատ դյուբել իր պտուտակներով:</p> <p>Լուսատույի տվյալները պետք է լինեն լազերային տպագրությամբ լուսատույի վրա,</p> <p>Լուսատույի քաշը պետք է լինի 300-330 գրամ,</p> <p>Արտադրողի կողմից առնվազն 2 տարվա երաշխիք</p> <p>Տեխնիկական ստուգում: Պատվիրատուն իրավունք ունի պահանջել մատակարարից իրականացնել լյումեն/վտ հարաբերակցության և իրական հզորության ստուգում՝ ապրանքի համապատասխանությունը ճշգրիտ գնահատելու համար:</p> <p>Լեդերի չափս-50/50</p> <p>Լեդերի հերթականությունը-լայնությունը-4 հատ, երկարություն-9 հատ</p> <p>Երկաթի և խոշորացույցի պահոցը լինի սիլիկոնե, չիրկիզվող և ունենա ԳՕՍՏ չափանիշ:</p> <p>Լուսատուի արտաքին գույն-մոխրագույն:</p>	հատ	450		
-----	----------	---	---	-----	-----	--	--

20.	44221171	Պատուհանի այլումինե սահմանափակիչ	<p>Պատուհանի մետաղյա սահմանափակիչ՝ կարգավորմամբ և արգելակով (ուղորդովել նկարով),S-աձև կառուցվածք: Թները կարող են ամրացվել ուղղահայաց կամ հորիզոնական մակերեսին՝ պատուհանի շարժումը վերահսկելու համար, Ամրացման կետեր: Երկու ծայրերում պետք է ունենան անցքեր պտուտակներով ամրացնելու համար,Կարգավորելի թև: Կենտրոնական հատվածում ներառված է կարգավորվող մաս, որը թույլ է տալիս երկարության փոփոխում և շարժման սահմանափակում,Շարժվող մասեր: Թների ծայրերին կան պտտվող կետեր, որոնք ապահովում են թևի ծավելյա վերահսկվող ձևով, Չափսերը՝ կենտրոնական կարգավորելի թևի 18-20 սմ, ամրացման երկու մասեր (ծայրերում՝ մեծ (18սմ), փոքր(8սմ): Ուղորդվել նկարով:</p> 	հատ	220		
21.	44221171/1	Դռան արգելակ հատակի	<p>Դռան արգելակ շրջանաձև մետաղյա հիմքով և կիսաշրջանաձև ռետինե բամպերով: Տրամագիծ 45մմ, բարձրություն 24մմ, ամրացման 1 անցքով: Ուղորդվել նկարով:</p> 	հատ	100		
22.	44221171/2	Դռան արգելակ պատի	<p>Նյութ -Մետաղական մարմին և ռետինե գլխիկ, Բարձրություն: Մոտավորապես 8-12 սմ Հիմքի տրամագիծ: Մոտ 4-6 սմ Ռետինե գլխիկ: Փափուկ ռետինից, որը կանխում է դռան վնասումը՝ մեղմելով հարվածը: Տեղադրում- Տեղադրվում է պատին: Ուղորդվել նկարով:</p>	հատ	30		

							
23.	44221171/3	Դռան արգելակ ունիվերսալ	Արգելակի չափերը՝ Բարձրությունը: 45 մմ Տրամագիծը: 33 մմ (ռեզինով՝ 35 մմ) Պատրաստված է չժանգոտվող մետաղից և ունի ռեզինե բարձ՝ բախման կլանման համար: Արգելակն ունի քանդվող մեխանիզմ, որը թույլ է տալիս ամրացնել հատակին: Ուղորդվել նկարով:	հատ	30		
							
24.	44191700/4	Ներկարարի ներկաման վաննա	Ներկարարի ներկաման վաննա 30սմ-35սմ լայնությամբ, 35սմ-45սմ երկարությամբ:	հատ	20		
25.	31684400/5	Վարդակ մեկ բնիկում երկտեղանոց	Էլ. վարդակ ներքին իր ամբողջական իրանով մեկ բնիկում երկու տեղանի սպիտակ գույնի 220-250վոլտ, ոչ պակաս 16 ամպեր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	50		
26.	44521120	Եվրոդռան փական 35մմ	Մետաղապլաստե դռան փական՝ 35մմ 153բ:	հատ	20		
27.	44221161/2	Մետաղապլաստե պատուհանի ծխնի՝ սպիտակ գույն	Մետաղապլաստե պատուհանի ծխնի՝ սպիտակ գույն, 75 մմ:	հատ	100		
28.	39831284	Շին. փրփուր մաքրող հեղուկ /փրփուրի ատրճանակը մաքրելու համար/	Շին. փրփուր մաքրող հեղուկ /պոլիուրեթանային փրփուրի ատրճանակը մաքրելու համար/:	հատ	5		
29.	44511100	Շինարարական փրփուրի ատրճանակ	Ատրճանակը նախատեսված է պոլիուրեթանային փրփուր կիրառելու համար: Պետք է ունենա փրփուրի հոսքի լիարժեք կարգավորում և բացառի ռետինե միջնապատերից փրփուրի	հատ	5		

			արտահոսքը: Ատրճանակը պետք է լինի չժանգոտվող պողպատից:				
30.	44511100/1	Միլիկոնի ատրճանակ	Միլիկոնի ատրճանակ մետաղական կառուցվածքով և ձեռքով աշխատեցնելու մեխանիզմով:	հատ	5		
31.	44911400	Պատուհանագոգ գրանիտից 650մմ*1800մմ	Պատուհանագոգ գրանիտից 650մմ*1800մմ Գույնը համաձայնացնել պատվիրատույի հետ	ք/մ	45		
32.	31651400/1	Մեկուսիչ ժապավեն	Հոսանքի մեկուսացման համար գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն սև և կապույտ գույների: Գլանափաթեթի երկարությունը ոչ պակաս 10 մետր: Գործարանային փաթեթավորմամբ	հատ	100		
33.	31211221	Էլ. անջատիչ	Էլ. անջատիչ ներքին, մեկ տեղանի 220-240վոլտ, ոչ պակաս 10 ամպեր, իր ամբողջական իրանով սպիտակ գույնի: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	50		
34.	39132220/1	Ջեռուցման այլումինե մարտկոցի խցան կախիչ	Ջեռուցման այլումինե մարտկոցի խցան կախիչ կոմպլեկտ 	հատ	130		
35.	39132220/2	Ջեռուցման այլումինե մարտկոցի կախիչ	Ջեռուցման այլումինե մարտկոցի կախիչ	հատ	20		
36.	44163420/1	Պոլիպրոպիլենային խողովակի անցում ¾ - ½ դ	Պոլիպրոպիլային խողովակի անցում ¾ - ½ դ	հատ	250		
37.	44163420/2	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ անցում ¾ - ½ դ.	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ անցում ¾ - ½ դ.	հատ	50		
38.	44163420/3	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 90°	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 90°	հատ	120		

39.	44163420/4	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 45°	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 45°	հատ	80		
40.	44531150	Սիֆոն	Լվացարանի սիֆոն գոֆրե, լվացարանին ամրացման մետաղյա ցանցով:	հատ	20		
41.	44163172	Ճկախողովակ ներքին ռետինե և արտաքին չժանգոտվող պողպատե հյուսվածքով 60 սմ	Ճկախողովակ ներքին և արտաքին չժանգոտվող պողպատե հյուսվածքով 60 սմ: Աշխատանքային ճնշում առնվազն 10 բար, Աշխատանքային ջերմաստիճան առնվազն 90°C, միացում 1/2" Fx1/2" F	հատ	30		
42.	42671180/9	Պերֆերատորի գայլիկոն /սվերլո/ պոբեդիտ 8մմ	Պերֆերատորի գայլիկոն /սվերլո/ պոբեդիտ 8մմ *160մմ:	հատ	20		
43.	39263530/2	Պլաստմասե կապիչ 300 մմ /ճռիկ, ժգուտ/	Պլաստմասե կապիչ 300 մմ /ճռիկ, ժգուտ/:	հատ	500		
44.	44531160/7	Պտուտակ գիպսաստվարաթղթի 25 մմ * 3,5 մմ գայլիկոնի /սվերլո/ ծայրով	Պտուտակ գիպսաստվարաթղթի 25 մմ * 3,5 մմ գայլիկոնի /սվերլո/ ծայրով:	հատ	5000		
45.	44163180/3	Մետաղական խողովակ ուղղանկյուն 40 մմ*30 մմ*2 մմ	Մետաղական խողովակ ուղղանկյուն 40 մմ*30 մմ* 2 մմ 6 մետրից ոչ պակաս երկարությամբ	զծմ	420		
46.	44191100	Նրբատախտակ /Ֆանեռա/ 1520 մմ * 1520 մմ * 10 մմ	Նրբատախտակ /Ֆանեռա/ 1520 մմ * 1520 մմ * 10 մմ	հատ	40		
47.	31211180/1	Ավտոմատ 16A	Հոսանքային հզորություն: 16 A Տեսակ: C տեսակի (ինդուկտիվ բեռների համար) Բևեռների քանակ: 1 (միաբևեռ) Լարում: 230/400 V AC Կարճ միացման խզման հզորություն: 6 kA Տեղադրում: DIN ռելս Օգտագործում: Կարճ միացումից և գերբեռնվածությունից պաշտպանություն	հատ	3		
48.	31211180/2	Ավտոմատ 25A	Հոսանքային հզորություն: 25 A Տեսակ: C տեսակի (ինդուկտիվ բեռների համար), Բևեռների քանակ: 1 (միաբևեռ), Լարում: 230/400 V AC, Կարճ միացման խզման	հատ	3		

			<p>հզորություն: 6 kA, Տեղադրում: DIN ռելե, Օգտագործում: Կարճ միացումից և գերբեռնվածությունից պաշտպանություն</p>				
49.	31211180/3	Հպարկիչ	<p>Հոսանքային հզորություն: 25 A Բևեռների քանակ: 2 բևեռ (2P) Կոնտակտների տեսակ: NO (Normally Open) նշանակում է, որ կոնտակտները բաց են, և փակվում են միայն հպարկիչի ակտիվացման ժամանակ Լարում: 230/400 V AC Կառավարման լարում: AC (այլընտրանքային հոսանք) Օգտագործում: Հիմնականում կիրառվում է էլեկտրական շարժիչների, լույսերի, ջեռուցիչների և այլ ինդուստրիալ սարքավորումների միացման և անջատման համար:</p>	հատ	6		
50.	44611400	Մետաղական արկղ	<p>Չափեր - 500 մմ (բարձրություն) x 400 մմ (լայնություն) x 200 մմ (խորություն) և պետք է ունենա IP65 պաշտպանություն Նյութ - Մետաղ, դռնակը փականով: Պետք է օգտագործվի էլեկտրական սարքավորումների, ավտոմատների, հպարկիչների և այլ բաղադրիչների տեղադրման և պաշտպանության համար:</p>	հատ	2		
51.	31211180/4	Ռելե	<p>Ռելե AVR-63 Հոսանքային հզորություն- 63 A (Ամպեր) – թույլ է տալիս աշխատել սարքերի և ցանցերի հետ, որոնք պահանջում են մինչև 63 ամպ հոսանք: Լարման կարգավորում - Կարող է աշխատել 230 V կամ 400 V AC լարման դեպքում՝ կախված համակարգի տիպից: Լարման կարգավորման ճշգրտություն: ±1.5% – այս ցուցանիշը ցույց է տալիս, որ լարման տատանումը կարգավորվում է շատ փոքր շեղումով՝ ապահովելով կայուն լարում սարքերին: Լարման տիրույթ - 150V–260V այս սարքը կարող է կարգավորել լարման տատանումներ, որոնք ընկնում են այս միջակայքում:</p>	հատ	2		
52.	31221160	Ռելե ժամանակի	<p>Լարման մատակարարում: 230V AC Մաքսիմալ հոսանքային հզորություն- 16 A (Ամպեր) Կոնտակտների տեսակ - 1 NO (Normally Open), ինչը նշանակում է, որ ռելեն սովորաբար բաց է և փակվում է միայն ծրագրավորված ժամանակին: Ժամանակային միջակայք - 1 րոպեից մինչև 168 ժամ (1 շաբաթ): Ծրագրավորման հնարավորություններ - Ռելեն պետք է թույլ տա ծրագրավորել սարքավորումների ավտոմատ միացումն ու անջատումը նախապես ընտրված</p>	հատ	2		

			ժամանակային միջակայքում: Աշխատանքային ջերմաստիճան -10°C -ից մինչև $+50^{\circ}\text{C}$: Էկրան- Թվային LCD էկրան՝ ծրագրավորման հեշտության համար:				
53.	31211180/1/5	Ֆոտոռելե	Լարում - 220V AC, Հոսանք 10 A, Կոնտակտներ- Normally Open (NO)՝ նշանակում է, որ կոնտակտները բաց են, և հոսանքը չի անցնում մինչև ռելեի ակտիվացումը: Ակտիվանալիս կոնտակտները փակվում են, և հոսանքը անցնում է՝ միացնելով սարքը Լուսային ինտենսիվության կարգավորում: Կարգավորվող Պաշտպանություն: IP44 (արտաքին պայմանների համար) Օգտագործում: Արտաքին լուսավորության ավտոմատացում (փողոցներ, այգիներ, բակեր)	հաստ	2		
54.	44322200	Մալուխ	Հաղորդալար պղնձե BBΓ-HΓ ՊՎՔ մեկուսացմամբ 3x2.5 Տիպ: BBΓ-HΓ (անհրդեհավտանգ, չի տարածում հրդեհը) Հաղորդալարի նյութ - Պղինձ (բազմաջիղ- многожильный) Քանակ - 3 լար՝ յուրաքանչյուրն առանձին մեկուսացված շերտով, որոնք միասին փաթաթված են մեկ ընդհանուր արտաքին ՊՎՔ մեկուսացմամբ: Հատված: 2.5 մմ ² (յուրաքանչյուր լարի հատվող մակերես) Մեկուսացում: ՊՎՔ (պոլիվինիլքլորիդ) Հրդեհավտանգության հատկություն: HΓ - չի այրվում և չի տարածում հրդեհը, Բազմալար (Уногожильный) նշանակում է, որ յուրաքանչյուր լարը բաղկացած է մի քանի մանր լարերից: Գույն: Մուգ գույնի՝ սև կամ մոխրագույն: 100 մ փաթույթով:	մետր	2000		
55.	44111414/5	Ներկ լատեքսային գունավոր	Ներկի ֆիրման՝ Betek Silan կամ Caparol Silan (լատեքսային ֆասսադային ներկ), որը պետք է լինի բարձրորակ, լվացվող և դիմացկուն: Գույնի կոդը՝ #8d181a (մուգ կարմիր բորդոյի երանգով), որը նախապես պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ: Լատեքսային հիմքով, դիմացկուն խոնավության, ուլտրամանուշակագույն ճառագայթների և կլիմայական փոփոխությունների հանդեպ, կիրառելի է բետոնի, գիպսի և աղյուսի վրա: Ներկը պետք է խառնված լինի հատուկ մեքենայական սարքով (ոչ ձեռքի գործիքներով), ապահովելով գույնի համաչափ բաշխում և գերազանց ծածկույթ:	լիտր	36		

56.	31221241/1	Պտուտակ դյուբելով հարվածային	Պտուտակ դյուբելով հարվածային 6մմ*40մմ:	հատ	500		
57.	44531220/1	Տափօղակ	Տափօղակ լայն մեջի անցքը 3-4մմ, դուրսը 12-15մմ:	հատ	2000		
Մատակարարման ժամկետը		Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվում առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից, (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում) բայց ոչ ավել քան 20. 12. 2024թ.:					
Մատակարարման հասցեն		Ք. Երևան, Նալբանդյան 128:					
Վճարման ժամանակացույց		Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:					
Այլ պայմաններ		Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և նոր: Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը պատվիրատուի պահեստում իրականացնում է մատակարարը իր միջոցների հաշվին: Յուրաքանչյուր չափաբաժնի մատակարարվող ապրանքի ամբողջ խմբաքանակը պետք է լինեն մեկ տեսակի և պատկանի նույն ապրանքանիշին:					

ԳՆՈՐ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											Ընդամենը	
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր
1.	31531500/7	Լուսամփոփ լեդ 59,5սմ * 59,5սմ											100%	100%	100%
2.	31331270/1	Էլ. լար 2*1,5 մմ											100%	100%	100%
3.	31331270/2	Էլ. լար 2*2,5 մմ											100%	100%	100%
4.	31684400	Էլ. վարդակ ներքին											100%	100%	100%
5.	30192231	Ներկարարի սկոչ թույլ կաչողականությամբ											100%	100%	100%
6.	30192231	Ներկարարի սկոչ ուժեղ կաչողականությամբ											100%	100%	100%
7.	44621100/2	Ջեռուցման այլումինե մարտկոց											100%	100%	100%
8.	44531220	Ջեռուցման այլումինե մարտկոցի սիլիկոնե տափօղակ											100%	100%	100%
9.	42131110/1	Փական այլումինե մարտկոցի ամերիկական /ուղիղ/ 1/2 դյույմ											100%	100%	100%
10.	44411300/1	Կերամիկական լվացարան											100%	100%	100%
11.	18141100/3	Ջեռնոց բանվորական											100%	100%	100%
12.	42671180/8	Պերֆերատորի գալիկոն /սվերլո/ պրբեդիտ 6մմ											100%	100%	100%
13.	42671180/11	Նասադկա PH-2 10սմ երկ.											100%	100%	100%
14.	42671180/12	Նասադկա PH-2 5-6սմ երկ.											100%	100%	100%

15.	42671180/13	Նասադկա PZ-2,10սմ երկ.												100%	100%	100%
16.	42671180/14	Նասադկա PH-1 10սմ երկ.												100%	100%	100%
17.	42671180/15	Նասադկա PZ-1 10սմ երկ.												100%	100%	100%
18.	44531160/11	Պտուտակ 4.2 մմ *13 մմ												100%	100%	100%
19.	31521560	30 Վատ լեդ լուսատու նախատեսված դրսի համար												100%	100%	100%
20.	44221171	Պատուհանի այլումինե սահմանափակիչ												100%	100%	100%
21.	44221171/1	Դռան արգելակ հատակի												100%	100%	100%
22.	44221171/2	Դռան արգելակ պատի												100%	100%	100%
23.	44221171/3	Դռան արգելակ ունիվերսալ												100%	100%	100%
24.	44191700/4	Ներկարարի ներկաման վաննա												100%	100%	100%
25.	31684400/5	Վարդակ մեկ բնիկում երկտեղանոց												100%	100%	100%
26.	44521120	Եվրոդռան փական 35մմ												100%	100%	100%
27.	44221161/2	Մետաղապլաստե պատուհանի ծխնի՝ սպիտակ գույն												100%	100%	100%
28.	39831284	Շին. փրփուր մաքրող հեղուկ /փրփուրի ատրճանակը մաքրելու համար/												100%	100%	100%
29.	44511100	Շինարարական փրփուրի ատրճանակ												100%	100%	100%
30.	44511100/1	Սիլիկոնի ատրճանակ												100%	100%	100%
31.	44911400	Պատուհանագոգ գրանիտից 650մմ*1800մմ												100%	100%	100%
32.	31651400/1	Մեկուսիչ ժապավեն												100%	100%	100%
33.	31211221	Էլ. անջատիչ												100%	100%	100%
34.	39132220/1	Ջեռուցման այլումինե մարտկոցի խցան կախիչ												100%	100%	100%
35.	39132220/2	Ջեռուցման այլումինե մարտկոցի կախիչ												100%	100%	100%
36.	44163420/1	Պոլիպրոպիլենային խողովակի անցում 3/4 - 1/2 դ												100%	100%	100%
37.	44163420/2	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ անցում 3/4 - 1/2 դ.												100%	100%	100%

38.	44163420/3	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 90°												100%	100%	100%
39.	44163420/4	Պոլիպրոպիլային խողովակի անկյունակ ¾ 45°												100%	100%	100%
40.	44531150	Սիֆոն												100%	100%	100%
41.	44163172	Ճկախողովակ ներքին ռետինե և արտաքին չժանգոտվող պողպատե հյուսվածքով 60 սմ												100%	100%	100%
42.	42671180/9	Պերֆերատորի գայլիկոն /սվերլո/ պրբեդիտ 8սմ												100%	100%	100%
43.	39263530/2	Պլաստմասե կապիչ 300 մմ /ճռիկ, ժգուտ/												100%	100%	100%
44.	44531160/7	Պտուտակ գիպսաստվարաթղթի 25 մմ * 3,5 մմ գայլիկոնի /սվերլո/ ծայրով												100%	100%	100%
45.	44163180/3	Մետաղական խողովակ ուղղանկյուն 40 մմ*30 մմ*2 մմ												100%	100%	100%
46.	44191100	Նրբատախտակ /Ֆանեռա/ 1520 մմ * 1520 մմ * 10 մմ												100%	100%	100%
47.	31211180/1	Ավտոմատ 16A												100%	100%	100%
48.	31211180/2	Ավտոմատ 25A												100%	100%	100%
49.	31211180/3	Հպարկիչ												100%	100%	100%
50.	44611400	Մետաղական արկղ												100%	100%	100%
51.	31211180/4	Ռեկե												100%	100%	100%
52.	31221160	Ռեկե ժամանակի												100%	100%	100%
53.	31211180/1/5	Ֆոտոռեկե												100%	100%	100%
54.	44322200	Մալուխ												100%	100%	100%
55.	44111414/5	Ներկ լատեքսային գունավոր												100%	100%	100%
56.	31221241/1	Պտուտակ դյուբելով հարվածային												100%	100%	100%
57.	44531220/1	Տափօղակ												100%	100%	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին՝
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N _
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Էդվարդ Ավետիսյան
ազգանուն, անուն

ստորագրություն